26 մարտի 2015 թվականի N 298 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) «Ոլորտ 2 - Հումանիտար գիտություններ և մշակույթ» բաժնի «Ստեղծագործական գործունեություն» ենթաոլորտի

2-90.03.06	Սոցիալ-մշակութային գործունեություն և ժողովրդական գեղարվեստական ստեղծագործություն (ըստ ճյուղերի)	2-90.03.06.01-4	Ղեկավար՝ ստեղծագործական խմբի (ըստ ճյուղերի)	4	3	-	3473

պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

2-90.03.07	Երաժշտական գործիքների պատրաստում և նորոգում	2-90.03.07.01-4	Ազգային նվագարանների պատրաստող և նորոգող	-	2.5	-	7312

2) «Ոլորտ 4 - Բնական գիտություններ» բաժնի «Ծրագրային ապահովման մշակում» ենթաոլորտի

4-62.01.03	Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր	4-62.01.03.01-4	Տեխնիկ՝ հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի շահագործման	4	3	4	3121

պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

4-62.01.04	Համակարգչային գեղարվեստական նախագծում	4-62.01.04.01-4	Վեբ-դիզայներ	3	3	-	3471

3) «Ոլորտ 6 - Գյուղատնտեսություն» բաժնի «Խառը գյուղատնտեսություն» ենթաոլորտի

6-01.50.02	Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում	6-01.50.02.01-4	Ֆերմեր	4	3	4	3212

պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

6-01.50.03	Ջերմատնային տնտեսություն	6-01.50.03.01-4	Տեխնիկ-ագրոնոմ	3	2	3	6113

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ